

ածանցեալ մարմայ մը համար գաղղ. կ'ըսուի ճերին (գերմ. Derivat), ինչն չըսենք «ածանցրութիւն» — վերջաւորութիւն մ'որ արդէն կը գործածուի ուրիշ պարագայից մէջ (Հմմտ. վերտեւն): Մեր գեղեցիկ եւ կարճ ոյն աւելի կրնար օդտագործուիլ այն դիպաց մէջ, երբ մեռնեան, ման եւն չեն կրնար ճշգրտիւ պատշաճիւ: Անոնք որ գրածեն օրինակի համար բշխոյն culture բառի որոշերմնդ մը թարգմանելու համար, շատ յարմար ձեւ մը ստեղծած են: Այսպէս կազմուած են շարք մը գեղեցիկ բառեր: Եւ՝ յիշելու համար միայն վերը (§ 25) յառաջ բերուած երկու բառերը, Narcose անշուշտ նաեւ «թմրութիւն» է (2), բայց վերաբուժական գործողութեան համար գործադրուած թմրաբերութեան կրնար պատշաճօրէն յատկացուիլ նմոյն եւ ասի լաւագոյն է քան կի ստեղծած «թմրուց»: Կայսպէս հրոսու բառի՝ բաց ի՝ «քնախու», առմանէ միւս առմանց համար կրնար ըսուիլ հնածոյն: Քանի որ արդէն hypnotisme եւն կը փոխազրուին «քնածութիւն», քնածութիւն (Լնաեւ «քնածութիւն») եւն բառերով: Մեր նաեւ ըստ իմաստին յարմար -(=)-եւ գործածած է քբացաւաբար գրելով բեկեներ (tétrébénie, ինչպէս tétrébylène գրած է զարտուղաբար բեկեների): Բայց ինչ որ բացառաբար էր՝ կրնար կանոնաւոր պաշտօն մը ստանձնել, ինչպէս ասոնք՝ նոյնպէս շարք մ'ուրիշ աւարտները զորոնք կարելի չէ հս յառաջ բերել, եւ արդէն աւելորդ է մեր նպատակին համար:

Նոյն ճամբան շարունակած են նաեւ գաւառաբարանները, եւ օրինակի համար կազմած են լինուալ, քանի որ կար ազգուաց, եւ քանի որ կար ոչ եւ էլ (բոլորչի, գոլորչի, ուղելշ եւն), ստեղծած են՝ ոչ (Հմմտ. գրթօւ, դանդարձ եւն, Ամառ. 159 եւն. Հմմտ. Ամառեան, 365): Կող բառէն յօրինած են կողմայ (կեղեւն եւն), կողմայ, եւ ուրիշ իմաստով ինչպէս կողմազ (իմունչ, Ամառ. 354), նոյնպէս գարձեալ կողմենք, կողմուազ (լազղղետեսակ, Ամառ. 5814, Հմմտ. 5889 եւն, եւ ուրիշներ). կամ գունուզ բառեն՝ ինչպէս ինոնուաց, նոյնպէս ինոնզ, ինոնզ (Ամառ. 155, — աւարել են՝ կողմէն ճակատի խորշում, կոմիտ. եւ կողմէն՝ չորցած, քաշուած, Ամառեան, 613) եւ նմաններ: Զիարդ եւ իցէ՝ թողլով այս բոլոր խնդիրները, ի վերջ օրինակ բերենք տակաւին աւարտ մը:

(Շարունակելի):

Հ. Յ. ՑԱՐԵԱՆ

<sup>1</sup> Ա. պահած է բեկենիսակու. բայց առաջնորդ՝ բեկենս, իսկ տրեբենթիլե բեկեկնուաս, բեկեկնաչիթու, տերեբենթիլե «բեկեկնուասէն». Զ չէ զրած ասոնց համապատասխանող բառերը:

## ԲԱՆԱՊԱՐԻ ՕՐԱԳՐԻՑ

Ա.

ՄԵՀՐՈՒԺԱՆ ԱՐԺՐՈՒՆՈՒԹ ԶԱՅՐՈՅՑ

Փաւառոս Բիւղանդը իւր «Պատմութեան» ե. գլու. ԽԴ. գլխում պատմելով չորրորդ գարի վերջին տասնամեակների հայ-պարսկական պատերազմների ու Մամիկոնեան-Արծրունի տոհմերի հակամարտութեան մասին՝ նկարազրում է մի միջադէս այսպէս:

«Ապա զրզուեաց Մերուժանս այս զթագաւորն Պարսից եւ առեալ զօրս բազում ի նմանէ եւ եկն եհաս յերկիրս Հայոց . . . : Գայր, հասանէր ամենայն բազմութեամբն զօրացն Պարսից յերկիրն Հայոց եւ թողոյր զբանակ զօրացն Պարսից ի գաւառին կորձէից եւ ինքն իւրավ սեփհականաւն զնդաւն հրոսիւն մեկնէր, զատանէր յերեաց զնդէն . . . : Եւ ինքն զիւր զունդն առեալ իսաղայր, գայր հասանէր յերկիրն կող զաւարի: Եւ ինքն զտեղի առեալ՝ առնէր տես ի բանակն Մանուկլի: Եւ գայրն հասանէն լրտեսքն եւ զիտէին զՄանուկլ, զի էր բանակ նոցա ի Բագրաւանդ զաւարի ի Բագուան աւանի, որ է մօտ յաւերակսն Զարեհաւանդ քաղաքի . . . : Եւ չու արարեալ (Մեհրուժանայ) կատարել զգործն, յոր փութացեալ կամէր հասանել, եւ էին ի վայրոն, ընդ որ գալ էր զնդին ընդ ճանապարհն, յերինք ինչ, որում ի բնակչացն եղջերք կոչեն: Եւ մինչզես գայր Մերուժանն ի ճանապարհի զնդաւն իւրով, զի պեցան նմա ուղեւորք, յորս հարցանէր Մերուժանն եւ տսէր:

— «Ճանապարհ ի Բագրաւանդ ընդ որ երթայ»:

Եւ ուղեւորացն տուեալ պատասխանի՝ ասացին:

— «Ճանապարհ ընդ եղջերս է»:

Եւ մեծապէս խորեաց Մերուժանն ընդ միտս իւր, տրամեցաւ ընդ բանան, ստեկայն ուղել հրաման չարաչար քարշել զուղեւորսն եւ ծեծել»:<sup>1</sup>

Կող զաւառում կամ կողովտում ինչ որ լեռնէր են եղել եղջերք անունով: Մեհ-

<sup>1</sup> Փատ առ. Բիւր, Պատ թ., Թիֆիս 1913, Էջ 375—377:

րուժանը հարցրել է Կողովութից Բագրեւանդ տանող ճանապարհը։ Ուզեւորները պատասխանել են, թէ ճանապարհն անցնում է Եղջերք լեռներով։ Պատասխանն անմեղ պատասխան է, բայց Մերուժանը սաստիկ վրդովուելով նրանց պատասխանից՝ չարաչար քաշըել է տալիս ուղեւորներին եւ ձեծում։

Ինչո՞ւ է զայրանում Արծրունի իշխանը։

Մինչեւ այժմ գեռ ոչ ոք չէ մատնանշել, թէ իշեալ հաստուածում բնագիրը պակաս ուղեր կամ բառեր ունի. բնագիրը լրիւ է։ Սակայն այս դէպօւմ մնում է անհաւանալի, թէ ինչո՞ւ է Մեհրուժանը կատագում, իրեն ուտում՝ լսելով, թէ «Ճանապարհ ընդ Եղջերս է»։

Որքան մեղ յայտնի է, այս հաստուածը մի զաւեշտական բացատրութիւն ունի, որ բերնէ բերան պատում է բանահիների շրջանում։ Մենք լսել ենք մեր ուսուցիչ ու վաստակաւոր բանասէր Ստեփան Կանայեանից։ Ըստ այս բացատրութեան Մեհրուժանը բարկանում է նրա համար, որ այդ պատասխանով ուղեւորներն ուղել են հասկացնել, թէ Արծրունեաց տիկինն անհաւատարիմ է, եւ Մեհրուժանն էլ՝ եղջերաւոր ամուսին։ Հին յոյների, արդի եւրոպացոց, այլ եւ ուռուների մէջ սովորական է եղջերաւոր անուանել այն տղամարդին, որի «կնոջ աշքն», ինչպէս ժողովուրդն է ասում, «դուրսն է»։

Այս բացատրութեանը քիչից չատից հաւանականութեան կերպարանք տալու համար պէտք էր նախ որ եւ է ակնարկ գտնել Մեհրուժանի ընտանեկան գժտութիւնների մասին եւ ապա գոնէ մէկերկու օրինակ բերել՝ ապացուցելու համար, թէ հայերի մէջ էլ անհաւատարիմ կին ունեցող ամուսնուն «Եղջերաւոր» են անուանել կամ անուանում, ինչպէս Հին յոյների, արդի եւրոպացոց կամ ուռուների մէջ։

Նման հիմքեր չեն բերուած, ուստի մենք այս բացատրութիւնը մերժելով՝ առջարկում ենք մի նորը։ Եւ մեզ թւում է, առեղծուածի բանալին տալիս է մի այլ հայ պատմագիր, այն է՝ Ղեւոնդը։

Սա իւր «Պատմութեան» թ. գլխում պատմելով արաբացոց անդրանիկ արշաւանքներից մէկի մէջ կամ 638 թուականի արշաւանքի մասին՝ գրում է։

«Եւ զունդ մի հատեալ (Իսմայելացոցն) ասպատակէին ընդ զաւառն Արտաղի ի վերայ զօրավարին Յունաց, որում անուն էր Պռկոպակ, որ էր բանակեալի գաւառին կողովութիւնը. իրալուծութիւն եւ Մարդուցայից։ Որում իրաղեկ եղեալ իշխանն Թէզողորոս, որ էր յաղդիչն Ռշտունեաց . . . մորմոքեալ ընդ կորուստ աշխարհիս Հայոց եւ ընդ ծովութիւն զօրավարին՝ ոչ ունէր ժոյժ . . . նոյն ժաման հրամայէր զօրացն, որ ընդ իւրով իշխանութեամբ էին։ «Վառեցարուք, ասէ, եւ ելէք ընդդէմ Իսմայէլի»։ Եւ նոքա հեծեալ յերիվարս իւրեանց՝ դարանամուս եղեն ի սարակն, որում Եղբարսն կոչէին, եւ կալեալ զառաջ կրծիցն՝ զբազումն ի նոցանէ սատակէին եւ առեալ զկապուտ անկելոցն՝ հատուածեալ ի զօրավարէն՝ զնացին ի գաւառն գառնի»։<sup>1</sup>

Մեզ թւում է, թէ չորրորդ ու եօթերորդ գարերում կատարուած անցքերի աշխարհագրական միջավայրը նոյնն է։ Մանուկը բանակել էր Բագրեւանդում, արեւմուտքում, Մեհրուժանը նրա վրայ զնում էր կողովութիւն, արեւելքից։ «Եղջերք» լեռը գտնվում էր կողովով Բագրեւանդ տանող ճանապարհի վրայ։ Երկրորդ դէպօւմ Պռկոպը բանակել էր կողովում, արեւմուտքում, արարներն եկել, անցել էին Արտապից, արեւելքից եւ զնում էին արեւմուրք, դէպի կողովութիւն այն մասը, որտեղ գտնվում էին հայ-բիւզանդական զօրքերը։ Թէզողորոս Ռշտունին կողովում — երես դէպի արեւելք — զարանամուտ է մինում մի եռուն մօտ, որ «Եղբարք» է կոչւում։ Փաւստոսը բարձունքի մասին ասում է «Լելինք ինչ», Ղեւոնդը՝ «սարակ»։ Երկուսն էլ ոչ շատ նշանաւոր լեռ նկատի ունեն։ Կարծում ենք, որ միեւնոյն բարձունքն է չէնց, «որում ի բնակչացն Եղջերք կոչէն» (Փաւստոս)։ Եւ որում Եղբարսն կոչէն» (Ղեւոնդ)։ Ղեւան անունը ճիշտ պահպանուել է Ղեւոնդի հատուածում, այն ինչ Փաւստոսի բնագիրն աղճատուած է եւ պէտք է ուղղագրել այսպէս։

«Եւ էին ի վայրսն, ընդ որ գալ էր գնգին ընդ ճանապարհն, Երինք ինչ, որում

1. «Պատմութիւն» Ղեւոնդեայ մեծի վարդապետի չափոց, թ. ապագրութիւն, Ս. Պետերբուրգ 1887, էջ 7-8.

ի բնակչացն եղ, բա թի (վոխանակ եղ ջե թի) կոչեն: Եւ մինչդեռ դայր Մերուժանն ի ճանապարհի գնդաւն իւրով, դիմեցան նմա ուղեւորք, յորս հարցանէր Մերուժանն եւ ասէր. «Ճանապարհ ընդ ո՞ր երթայ»: Եւ ուղեւորացն տուեալ պատասխանի՝ առացին. Ճանապարհ ընդ եղ, բա թի է (վոխանակ եղ ջե թի):

Ուղեւորները միամտաբար խոցել էին Մեհրուժանի ամենացաւոս տեղը: Արծրունի իշխանի կարծիքով անցորդներն ուղել էին ասել, թէ նրա ճանապարհը, նրա ուղիղ ճանապարհը ոչ թէ պարսկիների հետ լինելն է, այլ իւրայինների, հայրենակիցների, հայ եղբայրների հետ լինելն է:

Տարիներ շարունակ Արշակունի-Մամիկոնեան գերիշխանութեան դէմ կատաղի կոիւ մզած Արծրունին, որ պարսկական դիմուղղման (orientation) պարագուխ էր, լուսմ է մի պատասխան, որ նրան թւում է քաղաքական խրատ, յանդիմանութիւն, նախատինք.

— Ճանապարհ ընդ եղբար է:

Այժմ արդէն լիովին հասկանալի է, թէ ինչու «մեծապէս խարեաց Մերուժանն ընդ միտս իւր, տրտմեցաւ ընդ բանսն . . . տայր հրաման շարաչար քարշել զուղեւորն եւ ծեծել»:

## Բ.

ՆԱՌԵՑ ԿՈՐԻՒՆԸ ՎՐ ՍՏԵԽԻ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԵ ԱՊԵԼ

Որ կորիւն թարգմանիչը վրաստանի եպիսկոպոս է եղել, այս կարծիքը մեր զրականութեան մէջ վաղուց ի վեր ընդհանուր տեղի է եւ հիմնում է «Պատմութիւն վարուց եւ մահուան սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ թարգմանչի» մատեանի մէկ տողի վրայ: Այսուղ հեղինակը պատմելով վրաց տառերի գիւտը Մաշթոցի ձեռքով եւ վրաստանում վարդապետելու հովիւներ նշանակիմ՝ աւելացնում է.

«Յորոց եւ իմ անարժանիս եղեալ ի կարդ եպիսկոպոսութեան վիճակ» . . .<sup>1</sup>

Եթէ ընդունինք, որ այս տողն անապարտ է հասել մեղ, ապա նրանից կարելի է եղբակացնել կորիւնի՝ վրաստանի եպիսկո-

պոս լինելու մասին: Սակայն այս դէպքում պիտի ընդունել նաև, որ կորիւնը Մաշթոցի վրացի աշակերտներից էր: Բերենք այս ամբողջ հատուածը, որում գտնառում է նաև կորիւնին վերաբերող տողը:

«Հրաման տայր այնուհետեւ արքայն վրաց՝ ի կողմանց կողմանց եւ ի խառնազանջ գտառաց իշխանութեան իւրոյ ժողովը մանկունս, տալ ի ձեռն վարդապետին (=Մաշթոցի): Զոր առեալ արկանէր ի բովով վարդապետութեանն եւ հոգեւոր սիրոյն եռանդմամբ զաղտ եւ զժանդ շարաւահու զիւացն եւ զնոտիադործ պաշտամանն ի բաց այնչափ անջատեալ ի հայրենիաց իւրեանց եւ անյիշառակ ցուցանել, մինչեւ ասել, թէ «Մոռացայ զժողովուրդիմ եւ զտուն հօր իմոյ»: Եւ արդ զնուա, որ յայնչափ ի մասնաւոր եւ ի բաժանեալ լեզուացն ժողովեցան, միով աստուածաբարբառ պատղամօքն մի աղդ կապեալ՝ վառաբանիչք միոյ Աստուծոյ յօրինէր: Յորոց եւ իմ անարժանիս եղեալ ի կարդ եպիսկոպոսութեան վիճակ. որոց առաջինն Սամուէլ անուն, այր սուրբ եւ բարեպաշտօն, եպիսկոպոս կացեալ տանն արքունականի: Իսկ իրրեւ ընդ ամենայն տեղիս վրաց կարգեալ զդործ աստուածապաշտութեան՝ այնուհետեւ հրաժարեալ ի նոցանէ՝ գտնայր յերկիրն Հայոց»:<sup>2</sup>

Կասկած չկայ, որ ընդգծուած գերանունները վերաբերում են վրացիներին ու վրացի մանուկներին, «որոնց մէկնից ես անարժան» (=կորիւնս) եղայ եպիսկոպոսութեան կարգում ու վիճակում, եւ որոնց առաջինը Սամուէլ էր կոչւում» եւ այս: Որքան էլ հասուածի ամրողջական վերլուծութիւնը հակում, թեքում է կորիւնի վրացի լինելու ընդունելու, սակայն այս հակասում է մատեանի ու հայ մատենապութեան բոլոր տեղեկութիւնների, ըստ որոնց կորիւնն էր «ոմն յեղբարց ի Հայատան աշխարհէս»:<sup>2</sup> Բաց ի սրանից նոյն մատեանի միւս բոլոր մասերում ոչ մի ակնարկ չկայ, որ հեռաւոր կրկնութիւն լինէր այս տեղեկութեան, թէ կորիւնը վրաստանի գործիչներից է: Ընդ հակառակութիւն, իրրեւ այդպիսին երկրորդ անգամ մատեանշւնում է նորուց եպիսկոպոս Սամուէլն, այն, «զոր ի

<sup>1</sup> Կորիւն, «Պատմութիւն» վարուց եւ այս առաջն Մեսրոպաց վարդապետի մերոյ թարգմանչին, Պատմական մատեան մատեանդարսն, Թիֆլիս 1913, էջ 23:

<sup>2</sup> Կորիւն, էջ 52:

վերոյ նշանակեցաք»:<sup>1</sup> Մեր մատենադիրները — Փարպեցի, Խորենացի, Դրասխանակեցի եւ այլն, որոնց քաջ ծանօթ էր Մաշթոցի վարուց եւ մահուան Պատմութիւնը, ոչ ինչ չեն գրում Կորիւնի՝ Վրաստանի եպիսկոպոս Եղած լինելու մասին:

Արդ, չէ՞ր կարելի Ենթալրել, որ Կորիւնին վերաբերող այս նշանաւոր տողն աղաւաղուած է հասել մեզ: Եթէ այս՝ Ենչպէս կարելի է ուզգագրել այն:

Նորայր Բիւլանդացին իւր «Կորիւն վարդապետ եւ նորին թարգմանութիւնք» պրքում յիշատակելով Միքայէլ Զամշեանի, Մկրտիչ Սուլեյբեանի, Գարեգին Զարբանաւանի ու Բարսեղ Սարգիսեանի դրական կարծիքը Կորիւնի՝ Վրաստանի եպիսկոպոս լինելու մասին՝ առաջին անգամ առարկել է ընդհանուր դէպք դարձած այս համոզմունքի դէմ: Ասկա մէջ լինելով համապատասխան հատուածն՝ աւելացրել է «Ելլադիր հատուածդդ իանդարեալ է առանց իրիք երկրայութեան եւ թուի ուզգալիք».

«Յորոց եւ գտան արժանիք ելանի ի կարգ եպիսկոպոսուրեան վիճակի. որոց առաջինն Սամուէլ անուն եւ այլն»:<sup>2</sup>

Նորայր Բիւլանդացու ուզգումն ըստ էութեան ճիշտ է անգայման: Սակայն պէտք է դիտել նախ, որ նրա ուզգումն ու պէտք է դիտել նախ, որ նրա առաջարկած փոփոխակից՝ Կրորդ, որ նրա առաջարկած փոփոխակից՝ Համեմատաբար դժուար է հնագրական փոփոխութիւնների միջոցով ստանալ այն ընթերցուածը, որ այժմ դանում ենք առաջիք Կորիւնի մէջ:

Մեզ թւում է, թէ կարելի է առաջարկել մի ուրիշ, նոր ուզգումն, որ հագիւ մի քանի տասի տարբերութիւն ունենալով տպագրից՝ կարող է աւելի ընդունելի լինել բնագրաքննական տեսակէտից, մանաւանդ որ այսպիսի մի ուզգումն դանելու բանայի տարիս է նոյն լինըն Կորիւնի «Պատմութիւնը»:

Մատեանը Բաղասական Երկիրը բարեկարգելու մասին գրում է.

«Եւ զոման յիւրոց աշակերտացն վերակացուս իւրեանց կացուցանիք՝ հանդերձ

արամք քահանայիւ արքունական դրանն, որում անունն Յովնաթան կոչէին»:<sup>3</sup>

Նոյն մատեանում Աղուանից Երկրի մասին կարդում ենք.

«Առ որս թողեալ վերակացուս հաւատացելոցն՝ գերկուս ուման յիւրոց աշակերտացն, որ առաջնոյն Ենովլք անուն էր Երկրորդին՝ Դանան»:<sup>4</sup>

Վրաստան գնալու առթիւ առուած է.

«Եւ առնոյր ընդ իւր զոման լաւագյն յաշակերտաց իւրոց՝ յարուցեալ գնայր իջանել ի կողմանս վրաց»:<sup>5</sup>

Այս ընթերցումների հիման վրայ.

«Յորոց եւ իլլ ԱՆԱՐԺԱՆԻՇ եղեալ ի կարգ եպիսկոպոսութեան վիճակ, որոց առաջինն Սամուէլ անուն»

ուզգագրում ենք այսպէս.

«Յորոց եւ (գ) ո ՄԱՆ և ԱՐԺԱՆԻՇ եղեալ ի կարգ եպիսկոպոսութեան վիճակ, որոց առաջինն Սամուէլ անուն»:

Մաշթոցը սովորեցնում, վարդապետում է Վրաց աշխարհի մանուկներին, «Հէսց որոնցից արժանաւոր ոմանց եպիսկոպոսութեան կարգի ու վիճակի է հասցնում, որոնցից առաջինը Սամուէլ էր կոչում: Ճիշտ այսպէս անում էր միւս Երկրիներում եւ կամ ինչպէս ասուած է նաև Սիւնեցիների մասին».

«Եւ ժողովեալ մանկունս առ ի նիւթ վարդապետութեան եւ այնչափ փոյթ ի վերայ ունելով եւ զայեկարար սնուցանել եւ խրատել, մինչեւ ի նոցունց իսկ ի վայրենացն եպիսկոպոս անուչս եկեղեցւյն կարգել, որոյ անունն կոչէր Անանիսա:»<sup>6</sup>

Վիճելի տողի առաջարկուած ուզգումը վերացնում է Վրաստանին վերաբերող հատուածի անհարթութիւնն, այլ եւ լուծում մեր մատեանագիրեների լութեան դազունիքը Կորիւնի՝ Վրաստանի եպիսկոպոս կազմը լինելու մասին, քանի որ պարզում է, թէ Մաշթոցի վարուց եւ մահուան «Պատմութեան» մէջ ոչինչ ասուած չէ եղել Հետաքրքրող կէտի մասին յիշեալ իմաստով, եւ թէ ուրեմն ընդհանուր տեղի դարձած ու տարածուած կարծիքը յիրաւի բնագրի աղջաման արգասիք է լոկ:

<sup>1</sup> Կորիւն, էջ 30:

<sup>2</sup> Կորիւն, էջ 27:

<sup>3</sup> Կորիւն, էջ 22:

<sup>4</sup> Կորիւն, էջ 21—22:

Գ.

## ԿՈՒՆԴ ԱԲԱՄԱՋԴ

Մովսէս Խորենացին իւր «Հայոց պատմութեան 1. գրքի լ. լ. (լի) դիմում Երուանդեան Տիգրանին գովկելու նպատակով նրան նմանեցնում է Կունդ Արամաւզդին։ Նրան վերաբերող նախադասութեան վերջին ամբագրութիւնները պատկանում են Մասուկ Արեղեանին եւ Ստեփան Մալիսասեանին։

Մինչեւ Արեղանը բնագիրը վերականգնում է այսպէս։

«Ոչ Արամազդ ոք, այլ ի կամեցողսն լինել Արամազդ չորից եւս այլոց անուանելոց ոմանց Արամազդ։ յորոց մին է եւ Կունդ ոմն Արամազդ»։ —

Մալիսասեանն, ըստ մեզ, աւելի յաջող խմբագրելով՝ առաջարկում է կարդալ։

«Ոչ Արամազդ ոք, այլ ի կամեցողսն լինել Արամազդ՝ չորից եւս այլոց անուանելոց Արամազդ՝ մի է Կունդ ոմն Արամազդ»։<sup>1</sup>

Այս խօսքը հասկանալու, ինչպէս եւ Տիգրանին վերաբերող ամբողջ հատուածի իմաստը վերականգնելու համար վճռական նշանակութիւն ունի պարզել, թէ Արամազդին արուած «Կունդ» մականունն ինչ է նշանակում։

Ակնյայտ է, որ «Կունդ» բառին սովորական «կնտած», «ճաղատ» կամ «քաչալ» բառի իմաստ տալը կը հակասէ դիտաւորութեանը Խորենացու, որ ուղեցել է գովկել Տիգրանին։ Ի՞նչ երեւելի գովասանք է մէկին գովկելու համար ասել, թէ՝ ինչպէս որ չորս Արամազդներից միայն մէկն է քաշալ Արամազդ, այնպէս էլ սա միակն է, բարձր ու արժանաւորը շատերից։ Խորենացին, մեծատաղանդ մի քերթող, չէր կարող իւր ստենասիրելի հերոսին այնքան անհաշակօրէն նմանեցնել մի քաչալի, թէկուզ աս լինէր քաշալ . . . Արամազդ։ Այսպիսով, ինչպէս ժամանակին ճիշտ դիտել է Միարանը — Գալուստ Տէր-Մկրտիչեանը, «Կունդ» բառը սովորական անհարզական առումով հասկանալով յիշեալ նախադասութիւնը բացատրելն անչիմն է։

<sup>1</sup> Տես «Պատմագիրը Հայոց», համոր Բ., գիրը Ա. — Պավասի Խորենացւոյ «Պատմութիւն Հայոց», աշխատութեարք Մ. Արեգեանի եւ Ս. Յարսութիւնեանի, Տիգրան 1913, էջ 85, բարձր Մ. Արեղեանի ու ձանօթուածիւն Ս. Պալմասեանի։

Ինչպէս յայտնի է, Խորենացու իտալկան թարգմանիչն եւ Լանգլուան փորձել են «Կունդ» բառը բացատրել զարսկերէնում։

Նրանց ասելով պարսկերէնում այս բառը նշանակում է «Հզօր», «աներկիւդ», «պատերազմաէր»<sup>1</sup>. «Կունդ» բառին այս իմաստը տալ մօտաւորապէս վերականգնում է Խորենացու ասածի ճիշտ նշանակութիւնը։ Սակայն հէնց այստեղ էլ իսկոյն եւելթ հարց է ծաղում, թէ հատուածի խսկական նշանակութիւնը երեւան հանելու համար արդեօք կարիք կա՞յ անպայման պարսկերէնին դիմելու։ Մի՞թէ չէր կարելի հայերէնի օդնութեամբ լուսարանեւ այս մթին կտորը։

«Կունդ Արամազդ» արտայայտութիւնը հայերէնով բացատրելու մի փորձ արել է սրանից ուղիղ 30 տարի առաջ Միտրանը — Գալուստ Տէր-Մկրտչեանը ներքեւում, ծանօթութեան մէջ յիշատակուած իւր աշխատութեան էջերում։ Զերքի տակ ունենալով Խորենացու «Հայոց պատմութեան այն ձեռագիրը, որ զբուած է 17րդ դարում Ներսէս գրչի ձեռքով («Պատմագիրը Հայոց»-ի հրատարակութեան մը ձեռագիրը) եւ նկատելով, որ վերջինիս մէջ «Կունդ Արամազդ» կամ «Կունդ ոմն Արամազդ» բառերի փոխարէն գրուած է «Կատար ոմն Արամազդ»։ Տէր-Մկրտչեանը պնդում է, թէ Խորենացու սկզբնագրում եղել է «Կատար ոմն Արամազդ» կամ «Կատարումն Արամազդ»։ Բայտ Տէր-Մկրտչեանի՝ «Կատարումն Արամազդ» կարող էր նշանակել «Երումն», կատարեալ, այլ եւ ինդրուտնով կատարող Արամազդ», իսկ «Կատար ոմն Արամազդ»-ը՝ «գլխաւոր ոմն Արամազդ»։

Հասկա «Կունդ Արամազդ» կամ «Կունդ ոմն Արամազդ» ընթերցուածնէ՞րը։ Նրանց ծագումն ի՞նչպէս պէտք է բացատրել։

Գալուստ Տէր-Մկրտչեանն այս ընթերցուածների երեւան դարու գաղտնիքը բացատրում է «նպատակաւոր թարգմանութեամբ»։

«Արամազդի պատուարեր ու մեծարական սոորոգէլին, — ասում է Միարանը, — կարող էր թարգմանուել անարգական բարագական բարձրական»։

<sup>1</sup> Հմմն. Միարան (Գ. Տ. Մկրտչեան), «Խորենացու պատմութեան ուսումնական թարգմանութիւնը», Ա. աղարշապատ 1896, էջ 5 ու Պավասի Խորենացու «Հայութիւն պատմութիւնը» աշխարհաբար թարգմանեց եւ լուսարանեց Խորեն Փ. Ա. Առենքանէ, Ս. Պետական թարգմանութեամբ»։ Էջ 121։

ոսկ՝ քրիստոնեայ և նեղահայեաց ընդօրինակողից կամ Խորենացի մեկնող վարժապետ-վարդապալեաթից : . . . Ազգինագրում եղել է «Կատար» եւ ոչ թէ «Կունդ» : Եւ Կունդն ի՞նչ է, եթէ ոչ կատարի անարդական թարդմանութիւնը : Խորենացու բարեպաշտ մեկնիչ վարդապետը չէ կամեցել չափուածածին անուանել «Կատար, Պլում», ուստի եւ կոչել է քաջալ-Պլում, այն է «Կունդ» :<sup>1</sup>

Տէր-Մկրտչեանի այս ուղղումն, ի՞նչ խօսք, հարթում, հասկանալի է դարձնում Խորենացու բնագրիրը : Բայց այս դէպքում ծագում են նորանոր առարկութիւններ :

Խնդիրն այն է, որ «Կունդ» կամ «Կունդ ոմն» ընթերցուածներն ունեն Խորենացու բոլոք ձեռագրերը, բացի չորսից (բացի «Պատմագիրք Հայոց»-ի հրատարակութեան Իցկի ձեռագրերից), եւ այս ընթերցուածը պարունակող շատ ձեռագրեր բնագրաննական տեսակէտից անկասկած անչափ աւելի բարձր են, բայց «կատարումն» խմբի ձեռագրերը : Երկրորդ, մեր գրտկանութեան մէջ շատ ու շատ տեղ հին հայ աստուածների դովասանական մակդիրներ ենք դառնում : Յիշեցէք հէնց միայն Աղթանգեղոսից «մեծն, արին Արամազդ», «Քաջն Վահագն», «մեծ Անահիտ տիկին», «Փառք ագդիս մերոյ եւ կցուցիչ», «մայր ամենայն զգաստութեան», բարերար ամենայն բնութեան մարդկան» արտայայտութիւնները :<sup>2</sup> Այս մակդիրները նոյնպէս կարող էին միտումաւոր թարդմանութեան ենթարկուել քրիստոնեայ մեկնիչ վարժապետ-վարդապակտների կողմից, բայց չեն ենթարկուել : Պատճենի հոգմից, բայց չեն ենթարկուել : Պատճենու հապալ ինչո՞ւ եղակի բացասութիւնն է կազմել չարաբաստիկ «Կատար Արամազդ» և գարձել «քաջալ-Պլում Արամազդ» :

Այս անհասկանալի է, կասկածելի :

Իսկ չի՞ կարելի արդեօք հակառակը ենթաղրել : Զի՞ կարելի ընդունել, որ սկզբնագրում եղել է ոչ թէ «Կատար ոմն» կամ «կատարումն Արամազդ», այլ «Կունդ կամ «կատարումն Արամազդ», կամ «Կանդ ոմն Արամազդ», Արամազդ» կամ «Կանդ ոմն Արամազդ», ինչպէս որ ունեն ձեռագրերի մեծամասութիւնն ու որտ միջից էլ ընտրելագոյնները, թիւն ու որտ միջից էլ ընտրելագոյնները,

իսկ յետոյ, ժամանակի ընթացքում, երբ այս վերջին արտայայտութիւններն ուկուել են անհասկանալի գառնալ, մեկնիչ վարժապետ-վարդապետը թարդմանել է «կատար Արամազդ» կամ «կատարումն Արամազդ», եւ նրա այս թարդմանութիւնը, որն անպայման ուղղամիտ ու ոչ թէ միտումաւոր, ոչ թէ ծաղրական թարդմանութիւնն է, գրիչները մտցրել են մի քանի նոր ձեռագրերի մէջ : Այս ենթարդութեան դէպքում «Կունդ» այլ եւս չէր կարող «Քաջալ» նշանակել, այլ մի ուրիշ բան, ամենայն դէպու մի գրական յատկութիւն :

Ունի<sup>3</sup> արդեօք «Կունդ» բառը մեր լեզում մի այլ նշանակութիւն, որ բանալի ծառայէր այս փականքը բանալու համար : Ունի, եւ մասնաւրապէս մեր բարբառները բաւական առաս նիւթ ու հաստատուն կուռան են տալիս Խորենացու այս նշանաւոր խոսքը հասկանալու եւ բացատրելու համար :

Հրաչեայ Աճառեանի «Հայերէն գաւռական բառարան» ու Ամառունու «Հայոց բառ ու բանը» ցոյց Են տալիս, որ մեր բարբառներում կայ ոչ միայն բառի «Կունդ» ձեւն, այլ եւ «կունդ» ձեւը, որ աւելի զործածական է : Որ «կունդ» ու «կունդ» հրմանիշ բառեր են, այս ապացուցում է հետեւեալ փաստով, — դլուիկոնձի անելուն կամ զլուխվկոնձի տալուն բարբառներում առում են թէ «կունդկի անել, կունդկի տալ»<sup>4</sup> ու թէ «կունդկի անել, կունդկի տալ»<sup>5</sup>:

Աճառեանի «Բառարանը» չունի «կունդ» ձեւն, իսկ ըստ Ամառունու «կունդ» նշանակում է «Ծրաղացի ցցի կենդրունին հանգրած բոլորակ հասա փայտը, որի շուրջը շարում են փառերը (Սիփան, Աւշաւալ)» : Տաճկերէն՝ «Թօփ» :<sup>6</sup> Արան պէտք է աւելացնել, որ ուստահայ բարբառներում «կունդ» ասում են նաև անուի «թօփին», ինչպէս եւ մի մանկական պտտուղ խաղալիկի «ճեռի» գլխին :<sup>7</sup>

<sup>1</sup> «Եմինեան ազգագրական ժողովածու» հաստոր Թուար Ռուատեան, «Հայերէն գառանական բառարան», Թիֆլիս 1913, էջ 604 ու Սահման Ամառունի, «Հայոց բառ ու բան» Առաջնական բառարան 1912, էջ 366 :

<sup>2</sup> Աճառեանի, 357 :

<sup>3</sup> Աճառեանի, 366 :

<sup>4</sup> Յ. Գալբաւէնի «Լիակատար բառարանը» ուսուերէնից հայերէնու, Թիֆլիս 1903, էջ 1078, ուսերէն օտուպից բառի գրմաց ունի «անուի, ական կունդ», եւ ապահեղ իրեւ օրինակ բերուած է հետեւեալ խօսք և Այնպէս ցեխ էր, որ անիւնները մինչեւ կունդը մէջը թաղ-

<sup>1</sup> Գ. Տ. Մկրտչեան, նոյն գիրը, էջ 4-7 :

<sup>2</sup> «Պատմագիրք Հայոց» Հայոց Ա. գիրը Բ. —

Ագաթանգեղայ «Պատմութիւն Հայոց», աշխատութեամբ Ագաթանգեղայ, Արամազդ, Ֆիլիս 1909, էջ 9.

31 էւ 73:

Աւելի գործածական ու բազմաթիւ առումներ ունի «կոնդ» բառը։ Նախ կոնդ=պերան (այսինքն՝ հասու վայր)։<sup>1</sup> Ապա կոնդ=բլուր<sup>2</sup>=թումբ, դար, բլուր<sup>3</sup>։ Այս-ինքն կոնդ նոյն իմաստն ունի, ինչ որ մենք առում ենք կատար, սար։ Յետոյ՝ կոնդ=պտեղ, իսկ պտեղ նախ=«ոստաց բժամատիք ծայր» ու երկրորդ=վէգի ոռքը, տաճկերէն՝ օմբա։<sup>4</sup> Այստեղ պէտք է զիտել, որ տաճ-կերէն օմբան այն է, երբ վէգը զվիվինը է կանգնում։

«Կոնդ» բառի այս առումները արդէն որոշ իմաստ չեն լուր են։ Մակայն Աճառեանի «Բառարանը» տալիս է նոյնի նաեւ այնպիսի գործածութիւններ, որոնք մերկացնում են բառի բուն նշանակութիւնը։ Այսպէս, օրի-նակ, ըստ Աճառեանի՝ Ղազախում ու Ղա-րաբաղում «կոնդ» նշանակում է «կոճղե-ղաւոր բայերու տակը մնացած հասու զլուխ»։ Օրինակ, ասում են՝ սոխի կունդ. նշանակում է սոխի զլուխ, սոխի մեծ զլուխ։ Նոյն աղբիւրից իմանում ենք, որ կոնդ=մարդու զլուխ։ Կայ անէծք — կոնդդ թա-ղեմ=զլուխդ թաղեմ։ Կայ նաեւ «կոնդով անել», որ նշանակում է «զլուխ անել»։ Ասում են. «Ճին կոնդով է անում», այսինքն «Ճին ճանճերը քշելու համար զլուխը շար-ժում է»。<sup>5</sup> Այս օրինակներին մենք մեր կող-ժից կարող ենք աւելացնել հետեւեալը։ Տողերս զրողի ծննդավայրում — Մակուսմ երեխանների հետ խազալիս երբ ուզում էին, որ մանուկը զլուխը շարժէ, թափահարէ այս ու այն կողմը, մանուկների լեզուով կան-չում էին. — «կոնդի, կոնդի արա», կամ ուղղակի՝ «կոնդի-կոնդի»։

Այսպիսով պարզում է, որ հայերէն բարբառներում «կոնդ»՝ կամ «կոնդ» բառն ունի մէկ բնողհանուր ու հիմնական իմաստ եւ նշանակում է հասու, մեծ, ծայր, կա-տար, զլուխ։

**Առօւմ էին։** Արեւելահայ մանկական դրոշ Արմակի առե-ականոց պատմուածքում կաթում ենք. «Ճաղկազարդի շաբաթ» օրը Սինոն ու Անուշը արդեն մի մի ռեռ ունեին, բայց կ'եւ ձեռ... Կունդը հոնի, լեզուակը հացի, կոթը բրիթի, մի խօսքով ամենալաւ ձեռերը, ու ինչ ձայն ունեին — ճաճուում էին, ճաճուում։ — «Հասկերո մանկական ամսագիր, խմբ. Կատ. Լիսիցեանի, թիվը 1912, թ. 2, Փետրուար, էջ 51։

<sup>1</sup> Աճառեան, 591։

<sup>2</sup> Աճառունի, 357։

<sup>3</sup> Աճառեան, 591։

<sup>4</sup> Աճառունի, 357 ու 569։

<sup>5</sup> Աճառեան, 592։

Ուրեմն կունդ Արամազդ (կամ թերեւս նոյն իսկ զբարարում էլ կոնդ Արամազդ) նշանակում է մեծ, զօր Արամազդ, մէկը, որ Արամազդների զլուխն է։ Ուրիշ խոս-քով՝ կունդ կամ կոնդ Արամազդ արտայայ-տութիւնը տառացի համազօր է Մեծն Արա-մազդ առութեանը։

Այժմ արդէն կարող ենք տեսնել, թէ ինչպէս էր գովում Խորենացին բուն եւ առա-ջին Տիգրանին։ Ինչպէս արդէն ասել ենք, խոսքի ճիշտ խմբագրութիւն համարում ենք նու. Մալիասեանի առաջարկածը։

«Արամազդ ասածող գոյութիւն չունի, — առում է Խորենացին, — սակայն նրանց համար, որոնք կամէն կում են, որ Արամազդ լինի (=որոնք կարծում են, թէ Արամազդ կայ), Արամազդ կոչուած ուրիշ չորսի մէջ մի հատիկ է կունդ (կամ կոնդ) Արամազդը (=Մեծն Արամազդը)։ Հէնց այսպէս էլ շատերն են Տիգրան կոչուել, սակայն մի հատիկ ու մենակ սա է Հայկազունների մի-ջից, որ Աշտահակին սպանեց եւ նրա տունն ու վիշտպամայր Անոյշին գերի տարաւ։

Խորենացու թարգմանիչներից մէկը — Խորչն Ստեփանէն զժուարութեան դէմ առուղ զրել է. «Այս հասուածը կարծես յե-տոյ մուծուած լինի, որովհետեւ չէ կապում նոյն զլուխ բովանդակութեան հետ»։<sup>1</sup> Մենք այժմ իրաւունք ունենք նրա նախաղասութիւնը «կունդկի» չուռ տարով ասելու. «Որովհետեւ հասուածը ուրա կապում է նոյն զլուխ բովանդակութեան հետ, ուստի անհնարին է կարծել, թէ այն յետոյ է մուծուած»։

Մոխէս Խորենացին, որ կորսակց փրկել է հայ ժողովրդական բանահիւառ-թեան թանկագին հասուածներ, կունդ կամ կոնդ Արամազդով մէզ թողել է մի մեծար-ժէք նմուշ նաեւ հայ ժողովրդական զիցա-նուններից։

Երևան, 22 Հոկտ. 1925:

ԹԱՇԻԾՈՅ ՍԻԴԱՎԵԼԿԵԱՆ



<sup>1</sup> Մոխէս Խորենացու «Հայկական պատմութիւն» աշխարհաբար, ճանօթութիւնների բաժին, էջ 121—122։